ՀԱՅԱՌԻ ՁԿՆՈՐՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՍԵՎԱՆՈՒՄ

А. М. Вартанян. Работа рыботдела Арменторга на Севанском озере

A. M. Vartanian. Die Arbeiten der Fischereiteilung Armentorgs am Sevan-See in Armenien

Վորպեսզի ընթերցողը կարողանա ճիշտ պատկեր կազմել ՀԱՅԱՌԻ Ձկնորսական բաժնի աշխատանքների մասին, անհրաժեշտ եմ համարում ամփոփված ձևով նկարագրել ՍԵՎԱՆԱ լճի նախկին շահագործման ձևերը։

Մինչև Հայաստանի խորհրդայնացումը Սևանա լճի ձկնորսությունը շարունակ արվում էր կապալով ըստ ձկնորսարանների։ Գավառի խոշոր կուլակներն ու առևտրականները, մի քանի տասնյակ մարդիք վերցնելով իրենց ձեռքը այդ ձկնորսարանները և ունենալով լայն հնարավորություններ, լճի շահագործումից խոշոր գումարներ են վաստակել։ Բանվորական ուժը Նոր-Բայազետի գավառում մատակարարել է, այժմ էլ մատակարարում է չափազանց առատ չքավոր գյուղացիությունը։ Տարեկան 5—6 հարյուր բանվորներ սոսկալի կերպով շահագործվել են. որպես մեկ բանվորն տարել է 20 կոպ. աշխատավարձ, աշխատելով 10-ից 12 ժամ։

Ձկնորսական գործիքների համար պահանջվող նյութեր յեղել են առատ և աժան, կապալառուները Նոր-Բայազետ քաղաքում հնարավորություն են ունեցել ընտրել և գնել համապատասխան քանակի և վորակի նյութեր, ամենից շատ գործածվող պենկովի № 12 3 թելը փութը՝ 8—10 ռուբլի։ Ձկան ընդհանուր վորսը տարեկան կազմել է մոտավորապես 60.000 փութ (ճիշտ հաշվապահական թվեր չկան), վորից մոտավորապես 60%-ը վաճառել են տեղերում՝ լճափերում եղակիներին և տեղական աղգարնակչությանը, իսկ 40%-ը, այսինքն 24.000 փութը արտահանել են դանդաղն շուկաներ՝ Յելիսավետպոլ, Լենինական, Թիֆլիս և այլն։ Ձկան փոխադրությունը կատարվել է գլխավորապես եղերով։

Ուռկանավարները ընկերակցել են կապալառուին հետևյալ ձևով։ Ուռկանի համար անհրաժեշտ նյութերը գնվում էին կապալառուի մոտից և վարկի ձևով տրվում ուռկանավարին, վորը ստիպված էր ձկան վորսի արդյունքից վճարում էր կապալառուին. կապալառուն վճարում էր իրեն հաշվից լճի կապալավարձը, իսկ բանվորների աշխատավարձը վճարում էր կապալառուի և ուռկանավարի հաշվից հավասար չափով. դուռ ոգուտը բաժանվում էր նույնպես հավասար չափով։

Կապալառուները ձկնորսարաններում վոչ մի հարմարություն չեն ստեղծել ձկնորսության համար՝ ընակարաններ, պահեստներ, սառցարաններ և այլն, նրանք ձկնորսական սեզոններին իրենց աշխատանքները կենտրոնացրել են ձկնորսարաններին մոտիկ գյուղերում։

Այդ ժամանակ խիստ տարածված եր ձկան գողությունը. բանվորները ուռկանավարից, ուռկանավարը կապալառուից, կապալառուն՝ ուռկանավարից, իսկ մուկ փոխադրողները յերկուսից էլ և այլն. վերջին հաշվով ամենից շատ և բոլորից գողանում եր կապալառուն, տեղում ունենալով իր հավատարիմ ծառայողները, վորոնք այսպես թե այնպես հսկում և պաշտպանում եյին տերերի շահերը, իսկ կապալառուները գրսի շուկաները արտահանված ձկան վաճառքի հաշվից հոգով 50%-ն եյին ցույց տալիս ուռկանավարներին, վորովհետև արտահանումը և վաճառքը կատարվում եր միայն վերջիններիի կողմից, առանց ուռկանավարների վերհսկողության։

Հայաստանի խորհրդայնացումից հետո Պարժողկոմատը լճի ձկնորսությունը վերցնում է իր ձեռքը, յերկրի անտեսության քայքայման շրջանում ինվենտարի և ձկնորսական գործիքների բացակայության պատճառով Պարժողկոմատը հնարավորություն չի ունենում ձկնորսական գործը ամբողջապես վարել և լճից վերցնել այն արդյունքը, վոր հնարավոր եր։ Այն ժամանակ, յերբ ամբողջ յերկիրը սովի մեջ եր և Սևանա լճի ձկնամթերքները կարող եյին բավականի խոշոր դեր խաղալ սովի դեմ պայքարելու գործում, Պարժողկոմատը ուղարկել եր Յերևան 1921 22 թվին ընդամենը 5,000 փութ ձուկ։

1923 թ. լճի շահագործումը կապալով տրվում է Թիֆլիսի քաղաքացի ձկնավաճառ Ա. Հասեփովին, վորը ընկերակից դարձնելով իրեն Նոր-Բայազետի քաղաքի կապալառուներ՝ Արևշատյաններին ու Սողոյաններին, կազմելով «Սևան» անունով ընկերություն սկսում է լճի շահագործումը, սակայն նա հաջողություն չի ունենում, վնասվում է, չի կարողանում կատարել այն պարտականությունները, վոր հանձն եր առել Հողժողկոմատի հետ կնքված պայմանագրով։ Այդպիսով «ՍԵՎԱՆ» ընկերությունը կազմալուծվում է, և 1924 թ սեպտեմբերին Սևանա լճի ձկնորսությունը հանձնվում է ՀԱՅԱՌ-ին, վորը կազմակերպում է Նոր-Բայազետի քաղաքում ձկնորսական բաժին և սկսում աշխատանքը։

Առաջին տարին Ձկնորսական բաժինը աշխատում է չափազանց ծանր պայմաններում, ամեն քայլափոխում հանդիպելով խոչընդոտների։ Իմպերիալիստական և հետո քաղաքացիական պատերազմների ընթացքում ձկնորսական գործիքների անհրաժեշտ նյութերը սպառվել եին, յեղած գործիքները մաշվել և անպետքացել։ Ձկնորսական բաժինը ստիպված եր գալուստի նախկին կապալառուների ու ուռկանավարների մոտ յեղած հին մաշված ուռկանները գնել։ Նրան հաջողվում է Բագվից առնել 50 փութ կանեփի թել. այդպիսով վերանորոգում ու գործի յե դրվում աշնան ձկնորսական սեզոնին ընդամենը 6 ուռկան, վորը նախապատերազմյան շրջանում գործող ուռկանների 14%-ն եր կազմում միայն։ Ձկնորսական

բաժնին անհրաժեշտ եր վերացնել աշխատավորների միջից այն հոգեբանությունը ու վերաբերմունքը դեպի գործը, որ նրանց ժառանգություն եր մնացել անցյալից (գողություն, սաբոտաժ և այլն)։ Որպես Պետական արդյունաբերական ձեռնարկություն Ձուկ բաժինը պետք և ստեղծեր աշխատավորների համապատասխան վարակյալ կազմ, նրան անհրաժեշտ եր խոշոր ձկնորսարաններում ունենալ անհրաժեշտ բնակարաններ, պահեստներ ու տնտեսական այլ շենքեր, պետք եր կազմակերպել ձկան փոխադրության գործը, ձեռք բերել անհրաժեշտ ինվենտար և այլն։ Թված խնդիրները, որոնք հրամայողական կերպով դրված էին Ձկնորսական բաժնի առաջ, այնքան էլ հեշտ լուծելի խնդիրներ չէին, ի նկատի ունենալով այն չնչին միջոցները, որ դրված եր նրա տրամադրության տակ— ձուկ բաժնի ամբողջ դրամագլուխը 1924 25 թվին կազմում եր 12.000 ռուբլի։ Ձկնորսական բաժինը բավական խոշոր բացեր և թերություններ և ունեցել աշխատանքի ընթացքում, որոնք միանգամայն անխուսափելի էին տիրող պայմաններում, սակայն Ձկնորսական բաժինը չկորցնելու իր հավասարակշռությունը, հետևողական անցուլ և համառ աշխատանքներով, հաշվի առնելով անցյալի բացերն ու հաջողությունները, իր հետագա աշխատանքները ստիճանաբար ավելի նորմալ հիմքերի վրա էի դնում մինչև 1926 թ. աշնան ձկնորսական սեզոնի սկիզբը։ Ձկնորսական բաժնի ապարատի ստրուկտուրան հետևյալ պատկերն ուներ՝

ա) Ուսկան, որի վրա աշխատում է 18—22 թոռքաշող բանվորներ (ըստ թոռի մեծության), ուսկանավար, ուսկանավարի ողնական, ձուկ դարսող, ուսկանի պահակ և գրագիր ընդունող. վերջինը հանդիսանում եր ուսկանի աշխատանքների գլխավորը և պատասխանատու անձը և անմիջականորեն հաշվետու էր Ձկնորսական բաժնի առաջ. հետագայում ապարատի ստրուկտուրայի այդ ձևը դադարեց վոչ նպատակահարմար և վերակազմվեց հետևյալ ձևով։ Լճի խոշոր ձկնորսարաններում կազմակերպվեցին առանձին շրջանային ձկնորսարաններ և յուրաքանչյուր շրջ. ձկնորսարանում աշխատող ուսկանները և աշխատավորները յենթարկվեցին շրջ. ձկնորսարանների վարիչներին, որոնք գլխավարելով ձկնորսարանի աշխատանքները, պատասխանատու և հաշվետու էին հանդիսանում Ձկնորսական բաժնի առաջ. ապարատի այդպիսի վերակազմությունը խոշոր դրական արդյունքներ տվեց։

բ) Աշխատանքի վերահսկողությունը և ղեկավարությունը ուժեղացավ, տեղական աշխատավորների ինիցիատիվան բարձրացավ, հնարավորություն ստեղծեց կատարել շատ ավելի կրճատում և վերացնել բազմաթիվ և անտեղի գրագրությունները, վերացվեց տեղի ունեցող ժամանակ գեղծարարությունները ու հեշտացրեց հաշվապահական աշխատանքները։

Ստիճանաբար, ձեռք և բերվում և պատրաստվում է անհրաժեշտ ինվենտար և ձկնորսական գործիքներ. ուսկանների համար անհրաժեշտ նյութերի հայթայթման գործը կարգավորվում է յեթե վոչ լրիվ չափով, գոնե պահանջի 80%-ի չափով, չնայած, որ այդ նյութերի պակասը զգացվում է ամբողջ յերկրում և գները չափազանց թանգ են. որինակ պենկովի № 12/3 թելը, որ նախապատերազմյան շրջանում Նոր-Բայա-

գնթում արժեր 8—10 ռուբլի, այժմ կարելի յե ձեռք բերել միայն Մոսկվայում, Աստրախանում կամ Բաղվում փութը 48-ից մինչև 50 ռուբլիով։

Բանվորների և ծառայողների մեջ անհամեմատաբար զարգացել և այն գիտակցությունը ու զգայունքը, որ անհրաժեշտ և խորհրդային ամեն մի ձեռնարկում՝ աշխատանքների ու գործի նկատմամբ. այն ժառայական գողությունները, սարոտաժը և գեղծարարությունները, որոնք տեղի եյին ունենում 1924—25 թ. քչացել են, յեթե հաշվի չառնենք մասնակի և անհատական դեպքեր, որոնք ընդհանուր բանվորության կողմից ամենախիստ հարվածների յեն հանդիպում։ Բանվորների աշխատավարձը աստիճանաբար բարձրանում է. 1924—25 թ. բանվորի միջին աշխատավարձը կազմում եր ամսական 18 ռ. 16 կոպ., 1925—26 թ.՝ 22 ռ. 34 կոպ. իսկ 1926—27 թ.՝ 28 ռ. 42 կոպ։ Բոլոր խոշոր ձկնորսարաններում արդեն կառուցված են առաջին անհրաժեշտ շենքերը, Զաղալույում բնակարան, պահեստ և այլ տնտեսական շենքեր, ընդամենը 8 մասից 13.000 ռուբլու։ Բոլաղհրանում բնակարան 4 մասից բաղկացած, Ագիամանում բնակարան, դրասենյակ, պահեստներ, ապխտարան (КОПТИЛЬНЯ), սառցատուն, սառցարան, կամերաներ և դանազան տնտեսական շենքեր, 31 մասից 50.000 ռուբլու, ընդամենը 46 մասից 71.000 ռուբլու։ Նորագուլում կառուցված սառցատունը 28.000 փութ սառույցի տարողությամբ և 3 հատ սառցարան կամերաները տարեկան 20.000 փութ ձուկ սառեցնելու կարողությամբ, հիմնովին բարեփոխվեց մինչև այժմ գոյություն ունեցող ձկան պաշտպանման, արտահանման գործը, այժմ այդ սառցարանների միջոցով պատրաստված և լճամասերի և գետերի ձկան վորսը, վորտեղ պետական սիստեմով շահագործելը համարվել են վոչ նպատակահարմար և արվում են Զուկ բաժնի կողմից դանազան ձկնորսների և կապալառուների։

Հ. Մ. Վարթանյան.

ՁԿԱՆ ԲԵՌՆԱՎՈՐՈՒՄԸ ՆՈՐԱԴՈՒԶՈՒՄ ՀԱՅԱՌԻ ՁԿՆՈՐՍԱՐԱՆՈՒՄ
Погрузка рыбы на промысле Арменторга в Норадузе.